



Կարգապահական գործ թիվ ԿԳ-19007

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հուլիսի 16-ի թիվ 165-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/106-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԵՆ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Կարեն Սարգսյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Կարեն Տոնոյանին (արտոնագիր թիվ 1752) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Հովհաննես Քոչարյանը (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմելով Պալատ՝ հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում քննվել է թիվ ՎԴ/4211/05/16 վարչական գործն ըստ հայցի Կարեն Ադոյանի ընդդեմ ճանապարհային ոստիկանության՝ 17.05.2016թ. կայացված թիվ ԱԹ791066 որոշումը վերացնելու պահանջի մասին: Գործով որպես հայցվորի ներկայացուցիչ ստորագրել և հայցադիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Կարեն Տոնոյանը հայցադիմումին կցելով հայցվորի կողմից 27.06.2016թ. հասարակ գրավոր ձևով տրված լիազորագիրը, սակայն 18.12.2018թ. հրավիրված նախնական դատական նիստին ներկայացած գործով հայցվոր Կարեն Ադոյանը դատարանին հայտնել է, որ որևէ հայցադիմում դատարանին չի ներկայացրել և, որևէ լիազորագիր փաստաբան Կարեն Տոնոյանին երբևէ չի տվել: Արդյունքում, դատարանը ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի պահանջով 18.12.2018թ. որոշմամբ թիվ ՎԴ/4211/05/16 վարչական գործի վարույթը կարճել է:

Վերոգրյալի կապակցությամբ Դիմողը վկայակոչելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի որոշակի դրույթներ խնդրել է քննարկել իր դիմումով նշված հանգամանքները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 07.03.2019թ. թիվ 57-Ա/ԿԳ-19007 որոշմամբ փաստաբան Կարեն Տոնոյանի (արտոնագիր թիվ 1752) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 3.1.1 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով:

12.03.2019թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Նվեր Սարգսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական նիստի վայրի, օրվա և ժամի մասին, սակայն Խորհրդի նիստին չի ներկայացել:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

19.02.2019թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, որտեղ նշել է, որ հայտնել է, որ թիվ ՎԴ/4211/05/16 վարչական գործով հայցվոր Կարեն Ադոյանը հանդիսանում է իր հորեղբոր որդու Մելիք Տոնոյանի համազյուղացին: 2016թ. հունիս մասին, երբ այցելել է հորեղբոր որդուն, իրեն է մոտեցել Կարեն Ադոյանը և հայտնել, որ խնդիր է ունեցել ճանապարհային ոստիկանության հետ, ինչի համար տուգանվել է 200.000 ՀՀ դրամի չափով և խնդրել է օգնել վարչական ակտը բողոքարկելու հարցում: Այդ ժամանակահատվածում ինքն «Իրավունքի գերակայություն» ՀԿ-ի հետ համատեղ իրականացնելիս է եղել «Ճանապարհատրանսպորտային փոխհարաբերություններում իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմի գործարկում և իրավական դաշտի բարելավում» ծրագիրը, որի շրջանակներում իրականացնելիս են եղել ռազմավարական դատավարություններ: Այդ գործը ռազմավարական դատավարության շրջանակներում հետաքրքրություն է առաջացրել, ուստի բողոքարկել է ՃՈ ակտը, որի համար Կարեն Ադոյանի կողմից տրված լիազորագրի շրջանակներում հայցադիմում է ներկայացրել վարչական դատարան, սակայն՝ 18.12.2018թ. տեղի ունեցած դատական նիստին չի մասնակցել:

Փաստաբանը բացատրությամբ նաև հայտնել է, որ այս տարվա հունվար ամսին իրեն է զանգահարել հորեղբոր որդին և հայտնել, որ իր ներկայացրած հայցը մերժվել է, և խնդրել է որպեսզի այն բողոքարկի, սակայն «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից ծանոթանալով վճռի բովանդակությանը՝ զանգահարել է հորեղբոր որդուն և հայտնել, թե դատարանում ինչ է հայտարարել Կարեն Ադոյանը և, այդ պատճառով իրեն անհարմար դրության մեջ դնելու համար բացատրություն է պահանջել: Այնուհետև, հորեղբոր որդին խոսել է Կարեն Ադոյանի հետ և իրեն հայտնել, որ Կարեն Ադոյանն ապահովագրական պատահար է ունեցել և, երբ իրեն հրավիրել են դատարան ու հարցեր են ուղղել՝ ինքը կարծել է, որ դա վերաբերվում է

ապահովագրական պատահարի գործին և, վերջինս դրա շրջանակներում է հայտարարել, որ փաստաբան Կարեն Տոնոյանին լիազորագիր չի տվել:

Կարեն Տոնոյանը նաև նշել է, որ նման բացատրությունն իր համար ողջամիտ և բավարար չի եղել, սակայն հաշվի առնելով Կարեն Ադոյանի մտավոր մակարդակը՝ չի բացառվում, որ իրականում կարող էր, որ վերջինս այդպես կարծեր:

Բացատրությամբ Կարեն Տոնոյանն ողջամիտ չի համարել՝ իրեն Կարեն Ադոյանի կողմից լիազորագիր չտալու պայմաններում, վերջինիս անունից հայցադիմում ներկայացնելու հանգամանքը, որի առարկա հանդիսացող վարչական ակտն, որևէ կերպ իր իրավունքներին չէր առնչվում, և իր համար, որևէ պարտականություն չէր առաջացնում:

Բացատրությամբ փաստաբանը նաև բարձրացրել է այն հարցադրումը, թե որտեղից իր մոտ պետք է գտնվեր այն վարչական ակտը, որը բողոքարկել է դատական կարգով, եթե, այն իրեն Կարեն Ադոյանի կողմից տրված չլիներ:

Ամփոփելով բացատրությունը՝ փաստաբան Կարեն Տոնոյանը հայտարարել է, որ կատարել է Կարեն Ադոյանի հանձնարարությունը և գործել է, վերջինիս կողմից տրված լիազորագրի հիման վրա:

Խորհրդի նիստին ներկայացել է փաստաբան Կարեն Տոնոյանը և ըստ էության հաստատել է նախկինում ներկայացրած բացատրության մեջ նշված հանգամանքները, վերջինս նաև նշել է, որ իր մոտ եղել է երկու օրինակ լիազորագիր, որից մեկով դիմել է ոստիկանություն և խնդրել է տրամադրել գործում առկա նյութերը, իսկ մյուսը հայցադիմումին է կցել, իսկ պայմանագիր չի եղել, քանի որ ՀԿ-ի ծրագրի շրջանակներում է գործել և անվճար իրավաբանական օգնություն է ցույց տվել և Կարեն Ադոյանը եղել է ՀԿ-ի շահառուներից:

Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

19.02.2019 թվականին Պալատ մուտք է եղել քաղաքացի Կարեն Ադոյանի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ 2016 թվականի հունիսին հանդիպել է փաստաբան Կարեն Տոնոյանին ով գնացել էր իրենց գյուղ հորեղբորը այցելության և խնդրել է իրեն որպեսզի օգնի ճանապարհային ոստիկանության ակտը բողոքարկելու հարցում, որով տուգանվել էր 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով: Կարեն Ադոյանը նշել է նաև, որ փաստաբան Կարեն Տոնոյանը համաձայնել է օգնել և ինքը նրան տվել է լիազորագիր:

Կարեն Ադոյանը հայտնել է նաև, որ մի քանի տարի առաջ վթար գործ են ունեցել և կարծել է, որ իրեն դրա համար են կանչել դատարան, ուստի 18.12.2018 թվականին ներկայացել է դատարան և դատավորն իրեն հարցրել է թե տեղյակ է ինչ գործով են իրեն կանչել և ինքը հայտնել է, որ գիտի որ վթարի գործով է և այդ գործով բողոք չունի և ոչ մեկի լիազորագիր չի տվել:

Կարեն Ադոյանը նշել է, որ ինքն է խնդրել, որ Կարեն Տոնոյանը բողոքարկի ճանապարհային ոստիկանության ակտը և դրա համար վերջինիս տվել է լիազորագիր:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

13.05.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Նվեր Սարգսյանը կազմել է եզրակացություն:

16.05.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2019 թվականի հուլիսի 16-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ՎԴ/4211/05/16 վարչական գործով հայցվոր Կարեն Ադոյանի ներկայացուցիչ է հանդիսացել փաստաբան Կարեն Տոնոյանը:

Նշված փաստը հաստատվում է Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, Datalex տեղեկատվական կայքում առկա տեղեկությունով:

2. Քաղաքացի Կարեն Ադոյանը ցանկացել է որպեսզի փաստաբան Կարեն Տոնոյանն իր անունից կազմի հայցադիմում և լիազորագիր է տվել փաստաբան Կարեն Տոնոյանին, որպեսզի վերջինս բողոքարկի ճանապարհային ոստիկանության կողմից կազմված ակտը:

Նշված փաստը հաստատվում է Կարեն Ադոյանի և Պատասխանողի բացատրություններով, Datalex տեղեկատվական կայքում առկա տեղեկությունով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Կարեն Տոնոյանի (արտոնագիր 1752, ստացված՝ 06.10.2013թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Կարեն Տոնոյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ, նաև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:

Կանոնագրքի 3.1.1 ենթակետի համաձայն՝ փաստաբանը չպետք է վարի վստահորդի գործը, եթե բացակայում է այդ վստահորդի հանձնարարությունը, բացառությամբ 3.1.2 ենթակետում նշված դեպքերի:

Կանոնագրքի 3.1.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը կարող է վարել գործը, եթե՝

- նրան է դիմել վստահորդի ազգականը կամ ծանոթը.
- նրան է դիմել վստահորդի փաստաբանը կամ լիազոր ներկայացուցիչը:

Սույն ենթակետում նշված հանձնարարությունն ընդունելուց հետո փաստաբանը պարտավոր է ողջամիտ ժամկետում վստահորդից կամ նրա լիազոր ներկայացուցիչից ստանալ իր լիազորությունների վերաբերյալ համապատասխան հավաստում: Այդպիսի հավաստմանը կարող է հավասարեցվել օրենքով սահմանված փաստաբանի անունով տրված լիազորագիրը:

Տվյալ դեպքում Դիմողն իր դիմումում Պատասխանողին էր վերագրել առանց վստահորդի հանձնարարության վերջինիս անունից հայցադիմում ներկայացնելու վարքագիծ մինչդեռ քաղաքացի Կարեն Ադոյանը Պալատ ներկայացրել է դիմում, որով հայտնել է, որ ինքն է ցանկացել, որպեսզի փաստաբան Կարեն Տոնոյանն իր անունից կազմի հայցադիմում, որի նպատակով վերջինիս տվել է լիազորագիր, իսկ դատական նիստին արած հայտարարության պատճառ է հանդիսացել այն հանգամանքը, որ առաջին անգամ լինելով դատարանում՝ սկզբում, այդ գործը խառնելով այլ գործի հետ, այնուհետև խառնվելով է պնդել, որ փաստաբան Կարեն Տոնոյանին իր կողմից լիազորագիր չի տրվել, ինչը չի համապատասխանում իրականությանը:

Նման պայմանաններում, երբ գործում առկա է քաղաքացի Կարեն Ադոյանի Դիմումը, որով վերջինս հաստատում է, որ փաստաբան Կարեն Տոնոյանը գործել է իր կողմից տրված լիազորագրի հիման վրա և իր հանձնարարությամբ, Խորհուրդը գտնում է, որ բացակայում է կարգապահական խախտման դեպքը, հետևաբար սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ սույն դեպքում Դիմողը չի հանդիսացել վստահորդ, մինչդեռ Կարգի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝... Վարքագծի կանոնագրքի 3-րդ գլխով նախատեսված կանոնի խախտման հիմքով կարգապահական վարույթ կարող է հարուցվել միայն վստահորդի (այդ թվում՝ նախկին) հաղորդման հիման վրա, բացառությամբ նույն գլխի 3.1.6, 3.1.7, 3.1.8, 3.1.9, 3.1.10, 3.2.1, 3.2.5, 3.5.1, 3.5.3, 3.5.4 ենթակետերից որևէ մեկում նշված կանոնի խախտման դեպքի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Կարեն Տոնոյանի (արտոնագիր թիվ 1752) նկատմամբ Կանոնագրքի 3.1.1 ենթակետի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-19007 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Կարեն Սարգսյան

16 հուլիսի 2019թ.
թիվ ԿԳ/106-Ա
ք. Երևան